



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ**  
**ՐԻՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ**  
**ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ**

Հիսուսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ ձեռամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի Կիրակի, 6 Մայիս 2007-ին, յետ միջօրեին, հոգեւորականաց դասուն, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեանի, ՀՅԴ Բիւրոյի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան, Ազգային Վարչութեան, Կեդրոնական Կոմիտէի, ՀՕՄԻ, Հ.Մ.Ը.Մ.Ի, Համազգայինի, հայրենակցական, բարեսիրական եւ մշակութային միութիւններու, հոգաբարձական, երեսփոխանական կազմերու, մամուլի ներկայացուցիչներու, ազգային բարերարներու, նուիրատուներու եւ անլի քան հինգ հարիւր ներկաներու մասնակցութեամբ:

Արարողութեան առաջին բաժինով, կատարուեցաւ Ազգ. Առաջնորդարանի շէնքի մուտքի, ընդունելութեան, գրասենեակներու, դահլիճի, ժողովարաններու եւ գրատան բացման արարողութիւնն ու ժապաւեններու հատումը՝ բարերարներու եւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

Ժամը 4:00-ին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ առընթերակայութեամբ Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի ու Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի եւ մասնակցութեամբ ու ներկայութեամբ հոգեւորականաց դասուն, կնքահայրերու եւ բարերարներու, կատարուեցաւ Ս. Տրդատ եւ Ս. Աշիւն մատրան



անուանակոչութեան ինչպէս նաեւ 16 սիւնախաչերու, Մկրտութեան աւազանին ու սրբապատկերին օծման, մոմավառութեան սեղանին եւ վերնատան, օրհնութեան եւ անդաստանի հոգեպարար արարողութիւնը: Յատուկ օրհնութեան աղօթք եւ հոգեհանգիստ կատարուեցաւ Ազգ. Առաջնորդարանի բարերարներու եւ համալիրէն ներս իրենց սիրելիներու յիշատակին կանգնած սիւնաքանդակներու, խաչքարերու, ջրաղբիւրի եւ յուշակոթող

նորանցին հովանաւորութիւնը ստանձնած բարերարներու հարազատներու յիշատակին:

«Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահէն ներս, հանդիսավարութեամբ Փաթիլ Աբոշեան Գասպարեանի, պաշտօնական խօսք առին շինարարական յանձնախումբի ատենապետ՝ Տիար Վահան Պզտիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան:

Փակման եւ օրհնութեան խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան իր խօսքին մէջ նշեց թէ այսօր «պատմական եւ անկիւնադարձային հպարտառիթ օր մը ապրեցանք»: Մեր ժողովուրդին նիւթական եւ բարոյական աջակցութեամբ կառուցուած Ազգային Առաջնորդարանը, Ազգին հարազատ Տունն է եւ կոչուած է շունչ ու ոգի տալ ազգակերտ ու հայրենակերտ սրբազան այս հաստատութեան եւ հոգեւոր առաջնորդութիւն ջամբել մեր սիրեցեալ եւ հաւատաւոր ժողովուրդին: Առաջնորդ Սրբազանը այս առթիւ յայտարարեց թէ ազնիւ նուիրատուներ եւ պատուարժան բարերարներ, Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական բացման ուրախ առթիւ կատարած են անելի քան 300 հազար տոլարի նուիրատուութիւն:

*(Մանրամասնութիւնները յաջորդիւ)*

## **THE OFFICIAL OPENING OF THE WESTERN PRELACY A PROUD DAY FOR ALL**

On the afternoon of Sunday, May 6th, 2007, the official opening ceremony of the Western Prelacy took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of members of clergy, Consul General Armen Liloyan, members of A.R.F. Bureau, Central Executive Council, Executive Council, A.R.F. Central Committee, A.R.S., Homenetmen, Hamazkayin, compatriotic unions, sister organizations, Boards of Trustees, delegates, media, and over five hundred sponsors, donors, and friends.

The ceremony began with the ribbon-cutting of the building's main lobby, reception rooms, staff offices, conference rooms, bookstore, and other sections by the sponsors of each room and the Prelate. At 4:00 p.m., the Prelate, assisted by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, conducted the official naming of the St. Dertad and St. Ashkhen Chapel, and the consecration and blessing of the pillars, baptismal font, candle altar, and upper room, with the participation of clergy members, Godfathers, and sponsors. Requiem service was offered at the conclusion of the service for the memories of our sponsors.



Following the ceremony, guests headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where MC Mrs. Pattyl Aposhian-Kasbarian offered the welcoming remarks. Also offering their remarks were Mr. Vahan Bezdikian, Chair of the Building

Committee, Dr. Garo Agopian, Chair of the Executive Council, and Consul General Armen Liloyan.



In his closing remarks the Prelate expressed appreciation for the opportunity to share this historic day with our community as we witnessed the official opening of our home which was built with the moral and financial support of our benefactors and friends. In conclusion the Prelate announced and expressed thanks for donations made during this joyous occasion which exceeded 300,000 dollars.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.